ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/15

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Զառիթափի համայնքապետարան

Բողոք բերող՝ «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 03.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պատվիրատուից պահանջել ներկայացնել «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով անցկացված գնանշման հարցման հրավերի տեսաձայնագրությունը,

2. ուսումնասիրել նշված փաստական հանգամանքներն ու փաստաթղթերը և իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնել Բողոքներ քննող անձի լիազորությունները,

3. ապօրինության հաստատման դեպքում չեղյալ համարել անցկացված գնման արձանագրությունը և ըստ անհրաժեշտության պարտավորեցնել Պատվիրատուին անցկացնել նոր գնանշման հարցման հրավեր՝ օրինականության խստիվ պահպանմամբ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.03.2021թ.-ին:

05.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/15 համարի ծածկագիրը:

17.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 01.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2021թ.-ին:

2. «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ն 03.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մարտի 1-ին «Զառիթափ համայնքապետարան»-ը (այսուհետ՝ Պատվիրատու), որը գտնվում է ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն. Զառիթափ 3-րդ փող. 15 հասցեում, հայտարարել էր գնանշման հարցման հրավեր: Համաձայն որի, այս ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Նշված հարցման հրավերը ընդունելով՝ սույն թվականի մարտի 1-ին ճիշտ ժամանակին ներկայացել եմ հրավերով առկա հասցե, որպեսզի գնման գործընթացին հայտ ներկայացնեմ և հանդիպել եմ գնման գործընթացում

մի շարք ապօրինությունների, որոնց արդյունքում չեմ ճանաչվել ընտրված մասնակից: Նշված ապօրինույթունները ներկայացված են ստորև՝

ՀՀ Կառավարության 04 մասիսի 2017 թվականի N 526-Ն որոշման Հավելված 1-ի 32-րդ կետը 2-րդ մասում սահմանված գնային առաջարկի պահանջներին չի բավարարել մյուս մասնակցի գնային առաջարկը, ինչի մասին իմ կողմից տեղեկացվել է գնահատող հանձնաժողովին և նախագահին և քարտուղարին: Մասնակցի գնային առաջակը կցվում է:

Հայտեր պարունակող ծրարները բացելուց և մասնակիցների կողմից առաջարկվող գները հայտարարելուց հետո պարզ դարձավ, որ մյուս մասնակիցը չունի համապատասխան լիազորագիր, որպեսզի ներկայացնի Հայտ: Հանձնաժողովի քարտուղարը պնդում էր, որ իրավունք ունի առանց լիազորագրի՝ հիմք ընդունելով քաղաքացու բանավոր հայտարարությունը, ընդունել գնման հայտը և գրանցել գրանցամատյանում: Սակայն ես առարկում էի և քարտուղարը սրիպված՝ զգաահարելով ավելի բանիմաց մասնագետների, համոզվեց, որ իրավունք չուներ ընդունելու հայտը: Վրոհիշյալ որոշման 26-րդ կետի 5-րդ մասի համաձայն, «նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է»: Սույն կետով նշված իրավախախտումը կապացուցի տեսաձայնագրումը:

Գնահատող հանձնաժողովը հայտարարեց, որ 2-րդ մասնակցի ներկայացված փաթեթը չի համապատասխանում օրենքով սահմանված ձևին և ինձ՝ «ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ-ին, հայտարարեց որպես ընտրված մասնակից: Սակայն 01 մարտի 2021թ.-ին, հայտերի բացման օրը, հայտերի բացումից մի քանի ժամ անց՝ 16:30-ի սահմաններում, ինձ զանգահարում է հանձնաժողովի քարտուղարը և տեղեկացնում, որ իր սեղանի թղթերի միջից գտել է համապատասխան լիազորագիրը, և որ մյուս մասնակիցը նույնպես ունի իրավունք մասնակցելու գնման գործընթացին, չնայած որ սահմանված կարգով նույն օրը ժամը 12:00-ին ինձ արդեն հայտարարել էր ընտրված մասնակից: Քարտուղարին զգուշացրեցի, որ իր կողմից կատարվող գործողությունները անօրինական են և նա իրավունք չունի հայտերի բացման համար սահմանված ժամկետից հետո նոր փաստաթղթեր կցել գնման գործընթացին: Սակայն նա շարունակեց իր խոսքը և ինձ տեղեկացրեց, որ հիմա արդեն մյուս մասնակիցն է ճանաչվում ընտրված մասնակից և կազմվել է նոր արձանագրություն: Նոր արձանագրությունը կցվում է:

Արդյունքում, չնայած այն հանգամանքին, որ մյուս մասնակցի գնային առաաջարկը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, և մյուս մասնակցի հայտը ներկայացնելու պահին առկա չեն եղել համապատասխան փաստաթղթերը՝ լիազորագիր, նրան ճանաչել են ընտրված մասնակից:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պատվիրատուից պահանջել ներկայացնել «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով անցկացված գնանշման հարցման հրավերի տեսաձայնագրությունը,

2. ուսումնասիրել նշված փաստական հանգամանքներն ու փաստաթղթերը և իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնել Բողոքներ քննող անձի լիազորությունները,

3. ապօրինության հաստատման դեպքում չեղյալ համարել անցկացված գնման արձանագրությունը և ըստ անհրաժեշտության պարտավորեցնել Պատվիրատուին անցկացնել նոր գնանշման հարցման հրավեր՝ օրինականության խստիվ պահպանմամբ:

3. <u>Զառիթափի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 24.02.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3307-2021 գրությամբ դիմել է Զառիթափի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 09.03.2021թ.-ի և 19.03.2021թ.-ի գրություններով ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է, որ Զառիթափի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը չի տեսաձայնագրվել, հետևաբար այն հնարավոր չէ ներկայացնել:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Զառիթափի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.02.2021թ.-ին հայտարարվել է «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Զառիթափ համայնքի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն), որոնք խմբավորված են վեց չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Կանանց միջազգային օրվան մարտի 8-ին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
2	Երեխաների պաշտպանության օրվան նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
3	Ուսուցչի օրվան նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
4	Ամանորի տոնին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ն և «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում պահանջվող փաստաթղթերն առկա են, որոնք կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ն:

vi. Մասնակցի կողմից «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկը ներկայացվել է հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Կանանց միջազգային օրվան մարտի 8-ին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ 200 մարդ,	900 000		900 000
2	Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում, կազմակերպվելու է ս/թ հունիսի 1–ին, տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ մարդ,	720 000		720 000

3	ՈՒսուցչի օրվան նվիրված տոնական միջոցառում, կազմակերպվելու է ս/թ հոկտեմբերի 5–ին, տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ 200 մարդ,	900 000		900 000
4	Ամանորի տոնին նվիրված միջոցառում, կազմակերպվելու է ս/թ դեկտեմբերի 25–ին, տևողությունը մինչև 4 ժամ,մասնակիցների թիվը մոտ 250 մարդ:	1 350 000		1 350 000

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված

տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա ներկայացված հայտերը հանձնաժողովի կողմից մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Զառիթափի համայնքապետարանի կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.02.2021թ.-ին հայտարարված «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Զառիթափ համայնքի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերումը, որոնք խմբավորված են վեց չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Կանանց միջազգային օրվան մարտի 8-ին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
2	Երեխաների պաշտպանության օրվան նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
3	Ուսուցչի օրվան նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն
4	Ամանորի տոնին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն

vii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ի կողմից «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկը ներկայացվել է հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Կանանց միջազգային օրվան մարտի 8-ին նվիրված տոնական միջոցառման և ֆուրշետի կազմակերպման ծառայություն տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ 200 մարդ,	900 000		900 000
2	Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում, կազմակերպվելու է ս/թ հունիսի 1–ին, տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ մարդ,	720 000		720 000
3	ՈՒսուցչի օրվան նվիրված տոնական միջոցառում, կազմակերպվելու է ս/թ հոկտեմբերի 5–ին, տևողությունը մինչև 3 ժամ, մասնակիցների թիվը մոտ 200 մարդ,	900 000		900 000
4	Ամանորի տոնին նվիրված միջոցառում, կազմակերպվելու է ս/թ դեկտեմբերի 25–ին, տևողությունը մինչև 4 ժամ,մասնակիցների թիվը մոտ 250 մարդ:	1 350 000		1 350 000

Սակայն Հանձնաժողովը 01.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել է բավարար և Ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկում սխալ է նշվել գնման առարկայի անվանումը, որն էլ,

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության և 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Տէտէ հաշվապահություն» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/15 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Զառիթափի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՎՁՄ-ԶՀ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Վահե Ավետիսյան» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**